ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1963 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ. ԼՐԱՏՈՒ

ԿՈՒԼՏՈՒՐ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Իր գործունեության քառասուն տարին բոլորեց Հայաստանի Պետական Պատմական Թանգարանը։ Մեր հանրապետության այդ խոշոր կուլտուրական հաստատությունում են կենտրոնացված հայ ժողովրդի և նրա հեռավոր նախնիների պատմությանը և մշակույթին վերաբերող բազմահազար էքսպոնատներ՝ հնագիտական պեղումներից ստացված հարուստ նյութեր, ազգագրական-կենցաղային առարակներ և այլն։ Թանգարանի դիտական կոլեկտիվի ջանքերով ստեղծված է հայ ժողովրդի պատմության մշտական ցուցադրությունը՝ սկսած ամենահնագույն շրջանից մինչև 19-րդ դարի վերջը։ Թանգարանի աշխատակիցները գիտա-հետազոտական աշխատանքներին և պեղումներին զուգահեռ լուրջ և հետևողական գործունեություն են ծավալել ֆոնդերի հաշվառումը և պահպանումը բարելավելու, կատալոգներ կազմելու, թանգարանային նոր արժեքներ ձեռք բերելու, ինչպես նաև թանգարանագիտությանը վերաբերող մյուս կարևոր խնդիրների կատարման բնագավառներում։ Սակայն, այս ամենը, ինչպես և մշտական ցուցադրության կատարելագործումը, ուղղված են նախ և առաջ այն բանին, որպեսզի ծառայեն ժողովրդին, նպաստեն նրա հետաքրքրությունների բավարարմանը, գեղագիտական դաստիարակությանը և հայրենասիրությանը։

Հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթին ու պատմությանը վերաբերող այդ հարուստ գանձարանը ժողովրդական խոշոր գանձվածներին հասցնելու ազնիվ նպատակն էր հետապնդում նաև ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Նախագահության 1960 թվականի սկզբի այն որոշումը, որով Պատմության թանգարանում ստեղծվեց գիտա-մասսայական աշխատանքի բաժին։ Նորաստեղծ բաժինը թանգարանի դիրեկցիայի և մյուս բաժինների օժանդակությամբ ծավալեց հետևողական աշխատանք իր առջև դրված լուրջ և շնորհակալ խնդիրների կենսագործման ուղղությամբ։ Այժմ, երբ առկա են բաժնի շուրջ երեք տարվա գործունեության արդյունքները, վստահությամբ կարող ենք նշել, որ թանգարանի կոլեկտիվը գիտա-հետազոտական, դաշտային, ազգագրական և թանգարանագիտական այլ և այլ աշխատանքներին զուգահեռ ի վիճակի է հաջողությամբ կատարել նաև կուլտուր-լուսավորական, գիտա-մասսայական բնույթի խնդիրներ։

Շուրջ 100.000 մարդ և ավելի քան 1.000 էքսկուրսիա՝ այսպիսին է թանգարանի այցելությունների պատկերը միայն 1962 թ. ընթացքում։ Այս թվերին թանգարանի կոլեկտիվը հասել է՝ սերտ կապ ստեղծելով հիմնարկ-ձեռնարկությունների, ուսումնական հաստատությունների, գյուղական շրջանների և զինվորական մասերի, ՀԱՄԽ-ի, «Միջեռնակ» և պատանեական տուրիստական կայանների ու «Ինտուրիստ»-ի հետ. այցելությունների ավելացմանը զգալի օգնություն է ցույց տվել նաև թանգարանի կողմից հրատարակված ֆիլիշը և բարձր մակարդակով կատարված գեղարվեստական մեծաքանակ ռեկլամը։

Սակայն ամենից առաջ հարկ է նշել, որ թանգարանը գրավիչ է իր էքսպոնատների գիտական և գեղարվեստական մեծ արժեքով, էքսպոնատներ, որոնք յուրաքանչյուր այցելուի հիացմունքն են առաջ բերում։

Գիտա-մասսայական և մյուս բաժինների աշխատակիցները սպասարկում են ոչ միայն Հայաստանի քաղաքներից ու շրջաններից թանգարան այցելող շատ կոլեկտիվներին, այլ նաև Միության տարբեր վայրերից ու արտասահմանից Երևան ժամանող տուրիստական խմբերի և հյուրերի։ Այսպես, 1962 թվականի ընթացքում Միության տարբեր քաղաքներից թանգարան էին այցելել մի քանի հարյուր, իսկ արտասահմանից շուրջ 100 խումբ։

«Թանգարանը, որ պատմում է տաղանդավոր հայ ժողովրդի հին, հարուստ կուլտուրայի մասին, բացառիկ տպավորություն է թողնում։ Երջանիկ եմ այն այցելելու հնարավորությունն ունենալու համար»,— գրում է ակադեմիկոս Պալլադինը։

Բազմաթիվ հիացական տպավորություն են թողել նաև արտասահմանյան հյուրերը։ Ամերիկյան հայտնի նկարիչ Ռոբուկ Քենտը հետևյալ տողերը թողեց թանգարան այցելելուց հետո. «Այս օրը ընդմիշտ կմնա մեր հիշողության մեջ. մենք մեծ ուշադրությամբ դիտեցինք հայ մեծ ժողովրդի հոյակապ թանգարանը։ Հիանալի ժողովուրդ։ Այս օրը երբեք չի մոռացվի մեր կյանքում»։

Թանգարանի աշխատակիցները բարձր կազմակերպվածություն և մեծ բարեխղճություն դրսևորեցին մասնավորապես մաշտոցյան օրերին, երբ թանգարան այցի եկան մեծաքանակ հյուրեր ինչպես Սովետական Միությունից, այնպես էլ արտասահմանից։

Գիտա-մասսայական աշխատանքի բաժինը համեմատաբար ուժեղացրել է կապը բուհերի և դպրոցների հետ։ Իրենց ծրագրային թեմաների վերաբերյալ լրացուցիչ բացատրություններ ստանալու համար պարբերաբար թանգարան են այցելում Պետական համալսարանի, Անասնաբուժական-անասնաբուծական, Մանկավարժական ինստիտուտների և մյուս բուհերի ուսանողները։

Թանգարանի սրահներում հաճախակի են լինում դպրոցականները, որոնք ընդհանուր բնույթի բացատրություններից բացի ունկնդրում են բացատրողների թեմատիկ էքսկուրսիաներին և ուսուցիչների ղեկավարությամբ պատմության դաս են անցկացնում իրենց ծրագրային նյութի շուրջը։ Թեմատիկ էքսկուրսիաներ են կազմակերպվել դպրոցականների համար դեպի Կարմիր բլուր, Արին բերդ, Դվին և այլուր։ Ուսանողների և աշակերտների համար թանգարանի կինոսրահում պարբերաբար ցուցադրվել են գիտա-հանրամատչելի և ուսումնական կինոնկարներ։

Կուսակցական, կոմերիտական և արհմիութենական օրգանների հետ ունեցած փոխադարձ պայմանավորվածության հիման վրա թանգարանում պարբերաբար լինում են պրոպագանդիստական դասընթացների և կուլտուրայի համալսարանների ունկնդիրներ, պիոներական ջոկատներ, պատանի տուրիստների երթուղիներով Երևան ժամանած խմբեր և այլն։

Արդեն երկրորդ տարին է, ինչ թանգարանում գործում է լեկտորիումը՝ ընդհանուր և աշակերտական ցիկլերով։ Ընդհանուր ցիկլի գծով միայն այս տարի կազմակերպվել է ավելի քան 10 դասախոսություն, ընդ որում Երևան քաղաքի տարբեր կազմակերպություններից և շրջաններից թանգարան այցելած կոլեկտիվների առաջ հայ ժողովրդի պատմության և մշակույթի, հնագիտության և ճարտարապետության առանձին հարցերի շուրջը հանդես են եկել և հետաքրքիր դասախոսություններ են կարդացել պրոֆեսորներ Մ. Երեմյանը, Կ. Ղաֆադարյանը, Բ. Առաքելյանը, Ս. Պողոսյանը, գիտությունների թեկնածուներ Մ. Հասրաթյանը, Վ. Հարությունյանը, Վ. Մելիքսեթյանը, Հ. Մարտիրոսյանը և ուրիշներ։

Լեկտորիումի գործունեության գրական արդյունքների մասին է վկայում այն հանգամանքը, որ առանձին կոլեկտիվներ (օր. Օրգանական քիմիայի ինստիտուտը) մի դասախոսություն լսելուց հետո ցանկություն են հայտնում դառնալու լեկտորիումի մշտական ունկնդիրներ և դասախոսությունների ամբողջ շարք են լսում Հայաստանի պատմության վերաբերյալ։

Այս տարի թանգարանում սկսեց գործել նաև աշակերտական լեկտորիումը։ Աշակերտների առաջ հետաքրքիր գրույցներով հանդես են եկել պատմական գիտությունների թեկնածուներ Վ. Քալաշյանը, Հ. Մնացականյանը, ճարտարապետ Մ. Մազմանյանը, ինչպես նաև բաժնի աշխատակիցները։

Աշակերտների շրջանում մեծ հետաքրքրություն առաջ բերեց և նրանց հայրենասիրական ոգով դաստիարակելուն նպաստեց լեկտորիումի այն պարապմունքը, որը նվիրված էր Երևանի անցյալին և զարգացման հեռանկարներին։ Թանգարանի Ուրարտուին նվիրված սրահում երեխաները ունկնդրեցին կրտսեր գիտ. աշխատող Լ. Բուդումյանի զրույցին՝ Երևանի հեռավոր պատմական անցյալի մասին և տեսան ուրարտական այն սեպագիր արձանագրությունը, որտեղ խոսվում է Երեվունի ամրոցի կառուցման մասին. այնուհետև դահլիճում վաստակավոր ճարտարապետ Մ. Մազմանյանը հանդամանորեն ծանոթացրեց երեխաներին մեր հանրապետության մայրաքաղաքի զարգացման հեռանկարներին։ Վերջում աշակերտները դիտեցին Երևանին նվիրված «Վարդագույն քաղաքը» կինոնկարը։

Կոլտնտեսային և բանվորական կոլեկտիվների հետ կապերն ամրապնդելու նպատակով էին հետապնդում Շահումյանի շրջանի գյուղատնտեսության աշխատողներին և Ալյումինի գործարանի արտադրության ասպետներին նվիրված հանդիպման օրերը։ Այդ միջոցառումները կազմակերպված և բովանդակալից անցկացնելու համար թանգարանի կոլեկտիվի հետ միասին աշխատանքի լծվեցին նաև Ակադեմիայի հնագիտության և պատմության ինստիտուտների առանձին գիտնականներ։ Թանգարանի սրահներում բանվորների և գյուղացիների

համար հետաքրքիր, շերմ զրույցներ անցկացրեցին պրոֆեսորներ Կ. Ղաֆադարյանը, Բ. Առաբելյանը, գիտությունների թեկնածուներ Հ. Մնացականյանը, Հ. Ղազարյանը և ուրիշներ։ Թանգարանի հյուրերը ծանոթացան ցուցադրության հետ, հաճույքով դիտեցին Հայաստանի պատմությանը և ճարտարապետությանը նվիրված կինոնկարներ։ Այս հանդիպումները փոխադարձաբար հաճելի եղան և արտադրության աշխատողների և թե թանգարանի գիտական կոլեկտիվի համար, ուստի դրանք այսուհետև ավելի մեծ տեղ կգրավեն մեր աշխատանքներում։

Թանգարանում կանոնավոր գործում է կինոլեկտորիումը, որի գծով ցուցադրվել են Հայաստանի պատմությանը, հնագիտությանը, ճարտարապետությանը, ինչպես նաև Եգիպտոսի, Հունաստանի և այլ երկրների պատմական հուշարձաններին նվիրված գիտա-հանրամատչելի և ուսումնական կինոնկարներ։ Միայն 1962 թվականի ընթացքում կինոլեկտորիումի միջոցառումներին մասնակցել է ավելի քան 2.000 մարդ։

Թանգարանի գիտական կոլեկտիվի և նկարիչներ Մ. Տիրատուրյանի, Լ. Նալբանդյանի, Ս. Ասատրյանի համատեղ ջանքերով այս տարվա մայիսին պատրաստվեց և բնակչության լայն մասսաներին ներկայացվեց հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին նվիրված շրջիկ ցուցահանդեսը։ Ըստ էության այդ ցուցահանդեսը թանգարանի մշտական ցուցադրության խմբագրված վերարտադրությունն է մեծ ճաշակով ձևավորված 76 վահանների վրա և թանգարանի կոլեկտիվի գործնական պատասխանը Ակադեմիայի Նախագահության առաջադրանքին՝ թանգարանային հարստությունները աշխատավորության ավելի լայն խավերի սեփականությունը դարձնելու մասին։

Ցուցահանդեսը իր բացումը բռնեց մայիսի 21—24-ին՝ Ակադեմիայի ճեմասրահում՝ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված հոբելյանական գիտական սեսիայի օրերին։ Մայիսի 25-ից մինչև հունիսի 14-ը ցուցահանդեսը արդեն Օպերայի ճեմասրահում էր, իսկ հունիսի 16-ից նա մեծ շրջագայություն սկսեց Հայաստանի տարբեր քաղաքներում և շրջաններում։ «Շրջիկը» շուրջ 6 ամսվա ընթացքում եղավ Լենինական, Կիրովական, Ալավերդի քաղաքներում, Ստեփանավանի, Էջմիածնի, Աշտարակի շրջաններում և նույնիսկ առանձին գյուղերում (Օշական, Եղվարդ)։ Դեկտեմբերին ցուցահանդեսը Երևանի Կիրովի անվան գործարանի կուլտուրայի պալատում էր, իսկ այժմ՝ Այլումինի գործարանի կոլեկտիվի հյուրն է նա։ Ամենուրեք ցուցահանդեսը մեծ սիրով է ընդունվում այցելուների կողմից, որոնք ողջունում են «շրջիկի» կազմակերպման նախաձեռնությունը և հաջողություններ ցանկանում նրան։ «Մենք Կիրովականի քիմ. կոմբինատի մի խումբ բանվորներ,— գրում է Ա. Համբարյանը,—ծանոթանալով Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պետ. Պատմական թանգարանի շրջիկ ցուցահանդեսին կարողացանք ավելի լավ պատկերացում կազմել հայ ժողովրդի պատմության և կուլտուրայի վերաբերյալ։ Շնորհակալություն թանգարանի բոլոր աշխատակիցներին, իրենց կատարած այս մեծ ու պատվավոր գործի համար»։ Բզովդալի 82-ամյա բնակիչ Արմենակ Գրիգորյանը ևս իր հիացմունքն է արտահայտում նշելով, որ «ինձ վրա մեծ տպավորություն թողեց հայ ժողովրդի պատմության ցուցահանդեսը»։ Որտեղ էլ որ լինում է շրջիկ ցուցահանդեսը, նրա մշտական այցելուներն են լինում աշակերտները, որոնք խանդավառությամբ են ծանոթանում իրենց ժողովրդի պատմությանը։ Ալավերդու Չարենցի անվան դպրոցի 8-րդ դասարանի աշակերտների անունից Լուսիա Նազարյանը գրում է. «Դիտելով հայ ժողովրդի պատմության և մշակույթի ցուցահանդեսը խորին շնորհակալություն ենք հայտնում ցուցահանդեսը կազմակերպողներին։ Նայելով այս ցուցահանդեսը, ավելի խոր գիտելիքներ ստացանք հայ ժողովրդի անցյալի մասին։ Այս ցուցահանդեսը մեզ վրա թողեց անջնջելի տպավորություն»։

Շրջիկ ցուցահանդեսը այցելող կոլեկտիվների համար կազմակերպվել է շուրջ 250 էքսկուրսիա։ «Շրջիկի» վարիչ կրտսեր գիտաշխատող Ռուբեն Շահնազարյանը տեղերում կապվում է հիմնարկ-ձեռնարկությունների հետ, իր բացատրություններով և կոնսուլտացիաներով օգնում է ցուցահանդես այցելողներին։ «Շրջիկի» հետ շրջաններում են եղել նաև թանգարանի ավագ գիտաշխատակիցները, որոնք հանդես են եկել ցուցահանդես այցելած կոլեկտիվների առաջ։

1962 թ. 8 ամիսների ընթացքում շուրջ 80.000 մարդ է դիտել շրջիկ ցուցահանդեսը, որ ակնառու վկայությունն է այն բանի, որ «շրջիկը» իսկապես ճիշտ ուղու վրա է և ծառայում է իր հիմնական նպատակին։

Թանգարանի կոլեկտիվը գրալի աշխատանք է տանում նաև սպասարկման կուլտուրան բարձրացնելու ուղղությամբ. հրատարակված է թանգարանի ուղեցույցը, նկարագիր թանգա

բանի էքսպոզիցիայի վերաբերյալ և այլն։ Թանգարանի բաժինները պատասխանում են Միության տարբեր բաղաքներից և արտասահմանից ստացվող բազմաթիվ համակներին, հարցումներին, օգնում պավառագիտական և դպրոցական թանգարանների կոմպլեկտավորման և այլն։ Լուրջ աշխատանք է տարվում նաև ուսանողական և աշակերտական հնագիտական խմբակների պարապմունքները կազմակերպելու և գիտա-մասսայական բնույթի այլ աշխատանքների բնագավառում։

Այս ամենը մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ ակադեմիական ենթակայության թանգարանը գիտահետազոտական աշխատանքներին զուգահեռ հաջողությամբ է կատարում նաև իր առջև դրված կուլտուր-լուսավորական բնույթի խնդիրները։

Մ. ԽՈՆԴԿԱՐՅԱՆ